ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի մայիսի 6-ից 9-ը
Բոսնիա և Հերցեգովինա գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանուն**
   Տիգրան Ավինյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ փոխվարչապետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Սարայևո, Բոսնիա և Հերցեգովինա, 2019 թվականի մայիսի 6-9-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ)

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն ՎԶԵԲ տարեկան ժողովին

6. **Հանդիպումներ, ելույթներ, քննարկված հարցեր, պայմանավորվածություններ.**

Աշխատանքային այցի առաջին օրը փոխվարչապետ Տիգրան Ավինյանը մի շարք հանդիպումներ է ունեցել ՎԶԵԲ բարձրաստիճան ղեկավարության և ֆինանսական հատվածի ներկայացուցիչների հետ: Կայացել է ՎԶԵԲ փոխնախագահ Պիեր Հեյլբրոննի հետ փոխվարչապետի հանդիպումը, որի ընթացքում զրուցակիցները մտքեր են փոխանակել ՎԶԵԲ հետ Հայաստանի համագործակցության ներկա փաթեթի, գործընկերության առաջիկա ուղղությունների և այդ համատեքստում երկրի առաջահերթությունների ու հնարավոր ծրագրերի վերաբերյալ: Զրույց է ծավալվել հատկապես մասնավոր ու ֆինանսական հատվածների զարգացման վերաբերյալ ու շեշտադրվել դրանցում ՎԶԵԲ ներգրավվածության կարևորությունը: Անդրադարձ է կատարվել էներգետիկ ենթակառուցվածքների ու էներգարդյունավետության, ճանապարհաշինության, ջրային, "խելացի" գյուղատնտեսության ոլորտներում պետության նախաձեռնություններին, հանրային բարեփոխումների ծավալուն օրակարգին: Առանձնակի քննարկվել է պետություն-մասնավոր երկխոսության արդյունավետ ինստիտուցիոնալ հարթակներ ձևավորելու հարցը, ինչպես նաև «Աշխատիր Հայաստան» և պետական ընկերությունների մասնավորեցման ու կապիտալի շուկայի զարգացման ուղղությամբ Կառավարության մեկնարկած ծրագրերը: Զրուցակիցները պայմանավորվել են այդ ուղղություններով համագործակցության շուրջ առաջիկայում ավելի առարկայական երկխոսություն ծավալել:

Այնուհետև հաջորդել է ՎԶԵԲ-ում Հոլանդական խմբի ղեկավար, Հայաստանի գծով գործադիր տնօրեն Ֆրանս Վիքերսի հետ հանդիպումը Նիդերլանդների Ֆինանսների ու Արտաքին գործերի նախարարությունների ներկայացուցիչների ուղեկցությամբ: Հանդիպման ժամանակ քննարկումների առանցքը կազմել են ՎԶԵԲ հետ Հայաստանի գործընկերության նոր ռազմավարության մշակման ուղղությամբ տարվող աշխատանքները, ինչպես նաև այն հնարավոր ոլորտներն ու ծրագրային

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔԻ ՀԱՄԱՐ
Ա/Հ-03/33746
17 05 2019թ.

ուղղությունները, որոնք կկազմեն կառույցի հետ առաջիկա երկխոսության օրակարգը: Զրուցակիցներն առանձնակի անդրադարձել են տնտեսական ենթակառուցվածքների, գյուղատնտեսության արդիականացման, էներգարդյունավետության ոլորտներում երկրի կողմից կարևորվող ասպեկտներին ու իրականացվող ծրագրերին, ջրային ոլորտի զարգացման հայեցակարգային հարցերին:

Տիգրան Ավինյանը նաև հանդիպել է ՎԶԵԲ գլխավոր տնտեսագետ Սերգեյ Գուրիևի հետ: Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են Հայաստանի ու տարածաշրջանի տնտեսական զարգացման վիճակը, առաջիկա սպասումներն ու հեռանկարային միտումները: Երկխոսությունը ծավալվել է Հայաստանի տնտեսական բարեփոխումների օրակարգի և կառավարության կողմից հռչակված գերակայությունների շուրջ, որոնց հաջող իրագործումը պետք է կայուն հիմք ապահովի երկրի զարգացման որակական տեղաշարժերի համար: Քննարկման առանցքում հատկապես եղել են ենթակառուցվածքային ծրագրերը, երկրի կողմից իրականացվող հարկային բարեփոխումների օրակարգը, ինչպես նաև՝ աշխատաշուկայի, կրթական ու առողջապահական ոլորտներում հիմնարար բարեփոխումների օրակարգ ձևավորելու ուղղությամբ երկրի ջանքերն ու տեսլականը: Զրուցակիցները հաստատել են պատրաստակամությունը և փոխադարձ հետաքրքրվածությունը համագործակցության մի շարք ոլորտներում երկխոսությունը շարունակելու և խորացնելու ուղղությամբ:

Փոխվարչապետը նաև հանդիպել է JP Mprgan ընկերության կառավարիչ տնօրեն Ստեֆան Վեյլերի հետ: Հանդիպման հիմնական թեման արժեթղթերի միջազգային շուկայի ընթացիկ միտումներն էին, եվրապարտատոմսերի միջազգային շուկայում Հայաստանի բարենպաստ դիրքավորման հնարավորությունները և այդ ուղղությամբ ջանքերն ակտիվացնելու հետ կապված առաջիկա անելիքները, մասնավորապես՝ տեղական արժույթով եվրապարտատոմսեր թողարկելու հնարավորությունը:

Այցի առաջին օրը եզրափակվել է ՎԶԵԲ նախագահի կողմից ՎԶԵԲ կառավարիչների և բարձրաստիճան պատվիրակների պատվին տրված արարողությամբ, որի ընթացքում կարևոր շփումներ են կայացել ՎԶԵԲ նախագահի, ինչպես նաև՝ տարբեր երկրների ներկայացուցիչների հետ:

Այցի երկրորդ օրը փոխվարչապետ, ՎԶԵԲ-ում Հայաստանի կառավարիչ Տիգրան Ավինյանը մասնակցել է ՎԶԵԲ տարեկան ժողովի բացմանը և լիագումար նստաշրջանին: Նստաշրջանի օրակարգային հարցերը ներառել են կառույցի մի շարք ռազմավարական, ինստիտուցիոնալ ու ֆինանսական հարցերի քննարկումներ: Մասնավորապես, ռազմավարական հարցերի շարքում առանցքային քննարկման առարկա է եղել 2021-2025 թթ. ՎԶԵԲ ռազմավարական և կապիտալ շրջանակի ձևավորման նախապատրաստական աշխատանքները, այդ թվում՝ գործառնական ծածկույթի երկրներում իրականացված աշխատանքների ռազմավարական գնահատումը, նախաիրագործելիության ուսում-նասիրությունը և միջնաժամկետ առաջնահերթությունները, ՎԶԵԲ աշխարհագրական ընդլայնման հնարավորության հարցը: Պլենար նստաշրջանում ՎԶԵԲ ընտանիքի երկրների և կառույցների ներկայացուցիչները հանդես են եկել բանավոր հակիրճ ուղերձով: Տիգրան Ավինյանը նույնպես հնչեցրել է ուղերձ ՀՀ անունից: ՎԶԵԲ կառավարիչների խորհրդի նիստում փոխվարչապետի ամբողջական ուղերձին կարելի է ծանոթանալ ՎԶԵԲ պաշտոնական կայքէջում (հղումը՝ https://www.ebrd.com/annual-meeting-2019-keynote-speeches.html):

Տարեկան ժողովի լիագումար նիստում Կառավարիչների խորհրդի կողմից մի շարք որոշումներ են ընդունվել՝ կապված Բանկի 2018 թվականի գործունեության ֆինան-

սական և գործառնական արդյունքների, առաջիկա միջնաժամկետ ռազմավարական առաջնահերթությունների և կառավարման ասպեկտների հետ:

Նույն օրը կայացել է նաև փոխվարչապետի հանդիպումը ՎԶԵԲ փոխնախագահ Ալեն Պիլլոյի հետ, որի գործառութային շրջանակը ներառում է երկրների հետ ծրագրային համագործակցության և գործառնությունների փաթեթների համակարգումն ու գործընկերների հետ դրա շուրջ երկխոսությունը: Փոխվարչապետի կողմից ընդգծվել է մասնավոր հատվածի հետ ՎԶԵԲ համագործակցությունը շարունակելու և փոխադարձ արդյունավետ պայմաններով այն խորացնելու կարևորությունը՝ հատկապես հաշվի առնելով լրացուցիչ սուվերեն վարկեր ներգրավելու մասով Հայաստանի սահմանափակ ֆիսկալ հնարավորությունը: Միաժամանակ, ընդգծվել է երկրի զարգացման տեսակետից ռազմավարական նշանակության նախագծերի իրականացման արդյունավետության բարձրացման հարցը: Զրուցակիցները նաև քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ծրագրերի ու նախաձեռնությունների շուրջ ջանքերը համատեղելու հնարավորությունները: Ընդհանուր առմամբ, հանդիպումը կայացել է չափազանց դրական մթնոլորտում և հանդիպման ավարտին երկուստեք պատրաստակամություն է հայտնվել համագործակցությունը խորացնելու շուրջ:

Այցի վերջին օրը փոխվարչապետ Տիգրան Ավինյանը հանդիպել է Համաշխարհային բանկի՝ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի գծով փոխնախագահ Սիրիլ Մյուլլերի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են ՀԲ հետ երկրի գործընկերության ռազամավարության շրջանակներում տնտեսական մի շարք ոլորտներում հնարավոր ծրագրերը: Մասնավորապես, զրույցի առանցքում եղել են ջրային ոլորտի քաղաքականության ու ռազմավարական առաջնահերթությունների նույնականացման, ինչպես նաև՝ երկրի արտահանման ներուժը լիարժեք իրացնելու համար առկա խոչընդոտների բացահայտման ու դրանց ուղղությամբ համալիր լուծումների հարցերը, այդ թվում՝ տարածաշրջանային լոգիստիկ ենթակառուցվածքների ու ընթացակարգերի արդյունավետության բարձրացմանն համատեքստում: ՀԲ փոխնախագահի կողմից նշվել է այս ուղղություններով գործակցություն հաստատելու պատրաստակամությունը:

Այնուհետև հաջորդել է փոխվարչապետի հանդիպումը ՎԶԵԲ գլխավոր քարտուղար Էնցո Քվատրաչոկեի հետ: Կողմերը քննարկել են մի շարք ընթացակարգային հարցեր՝ կապված 2020 թվականից Բանկի առաջիկա քառամյա ցիկլի մեկնարկի հետ: Հարցերի շարքում էր նաև Բանկի տարեկան ժողովների առաջիկա շրջափուլը, ռեգիոնալ ներկայացվածությունը, որոշումների կայացման ընթացակարգերը:

Տիգրան Ավինյան

15 մայիսի, 2019 թ.